Ծանոթություն.— *Ըստ Ջալ (1, էջ 10) այս գերեզմանի վրա հնում մատուռ է եղել, որ ՌՄՁԵ — 1836 թվականին քանդել է Հարություն եպիսկոպոսը։*

Տարընթերցում.— *1. Ջալ բաց է թողել* Բագրատունի շահնշահի *բառերը՝ դժվար ընթեռնելի լինելու պատճառով, իսկ Հար,* Լալ *և ուրիշներ, արտագրելով Ջալ-ից, նույն սխալն են գործել։*

*Սակայն այստեղ ուշագրավն այն է, որ Լոռիի թագավորին Շահնշահ (թագավոր թագավորաց) են անվանում։ Գուցե պատճառն այն է, որ նա, Բագրատունյաց արքայական տնից լինելով, Անիի թագավորների տիտղոսն իրավունք է ունեցել վերագրելու նաև իրեն։*

## 145. Վանքի բակում, ս. Գրիգոր եկեղեցու մոտ, տապանաքարի վրա

*ԺԵ դար*

Հրատարակված է՝ Հար 295

1 *Այս է հանգիստ*
2 *Ներսէս փիլի-*
3 *սոփի։ Ած ողրի*
4 *քեզ։*

Ծանոթություն.— *Ժամանակը որոշում ենք 1475 թվականին գրված Մատենադարանի № 6383 ձեռագիր ավետարանի հիշատակարանի հիման վրա, որտեղ Ներսես փիլիսոփան հիշատակված է իբրև Արիստակես գրչի եղբայր։*

## 146. Տուտեորդու խաչքարի մոտ, տապանաքարի վրա

*Հ ՁԻ Մ 1271*

Հրատարակված է՝ Դրիմ 64

1 *Սարգիս վղապետն*
2 *է Գէգոմեցի*
3 *ՁԻ։*

Տարընթերցում.— Դրիմ Գեգոմեցի *կարդացել է* էգազումեցի:

## 147. Նախորդի մոտ, տապանաքարի վրա

*Հ ՈԿ Մ 1221*

Հրատարակվում է առաջին անգամ

*Վասակ, ՈԿ։*

## 148. Նախորդի մոտ, տապանաքարի վրա

*ԺԳ դար*

Հրատարակվում է առաջին անգամ

*Խաչատուր։*